



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ N 25 Ա

ք. Իջևան

23 հունվարի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՐԱՏԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐՈՎ / ԲԱԺԻՆ 01, ԽՈՒՄԲ 01, ԴԱՍ 01, ԾՐԱԳԻՐ 03 / ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011
թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <Գնման գործընթացի
կազմակերպման> կարգի 35-րդ կետի դրույթներով՝

հրամայում եմ.

1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու նպատակով
ստեղծել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

- Դ. Փաշինյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական
բաժնի վարիչ
- Հ. Անանյան - անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջին
կարգի մասնագետ
- Հ. Քլոյան - անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի
քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջին
կարգի մասնագետ
- Ա. Խաչատրյան - Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության հաշվապահական հաշվառման
բաժնի վարիչ

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԴԱՎԹՅԱՆ